

G. H. CHOPOURIAN, «THE ARMENIAN EVANGELICAL REFORMATION CAUSES AND EFFECTS», *Armenian Missionary Association of America, Inc., New York, 1972, 170 p.*

ԿԻՐԱԿՈՍ ՁՈՓՈՒՐԵԱՆ, «ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ԱՐԳԻՒՆՔՆԵՐԸ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ», հրատ. Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան, Նիւ Եորք, 1972, 170 էջ:

Անկախ հայ եւ օտար պարբերական մամուլի մէջ երեւցած ու մինչեւ օրս երեւցող յօդուածներէ, Հայ Աւետարանական Շարժումը արտադրած է շատ քիչ թիւով պատմադրական կամ դաւաբանական հատորներ: 128 տարիներու կեանք ունեցող Հայ Աւետարանական Եկեղեցիի պատմութիւնը՝ հասկնալի կամ անհասկնալի պատճառներով՝ շատ չէ խանդավառած այս շարժումին հետեւող զրիչները: Թերեւս ալ անոնք չեն ունեցած քաջութիւնը՝ գրելու Հայ Եկեղեցիին մէջ երեւան եկած այս «պտտակտում»ին կամ «բարեկարգութեան» մասին, որ չըլլայ թէ ճիշդ կամ անճիշդ կերպով քննադատութեան թիրախ դառնան, եւ կամ «արծարծեն հին վերքեր, որոնք ոչ մէկ կողմին օգտակար կրնան ըլլալ»...

Սակայն պատմադրութիւնը՝ իրրեւ գիտութիւն, վեր կը մնայ այսպիսի ենթակայական ու նեղմիտ մտահոգութիւններէ: Հայ Աւետարանական Շարժումը ու Եկեղեցիի գոյառումը պատմական դէպք մըն է, ու իրրեւ այդ՝ անբաժան մէկ մասը կը կազմէ Հայ Եկեղեցիի պատմութեան:

Հայ Աւետարանական Շարժումի մասին մեզի ծանօթ հրատարակուած գիրքերու թիւը – հայերէն եւ անգլերէն – ինն է: Վերջին քառորդ դարու ընթացքին հայրենակցական միութիւններու կողմէ լոյս ընծայուած «պատմագիրք»երու մէջ կը հանդիպինք մէկ կամ երկու գլուխներու, ուր կը նկարագրուի աւետարանականութեան մուտքը իրենց շրջանէն ներս, ու ապա կը ներկայացուին աւետարանական վարժարաններու, ժողովարաններու եւ դէմքերու ծառայութիւնները տեղւոյն հայ համայնքին: Ու պէտք է ըսել որ անոնց մէջ հանդիպած ենք անաչառ ու առարկայական բազմաթիւ զրիչներու:

Միայն յիշելով անցնինք այն գիրքերը, որոնք ուղղակի նուիրուած են Հայ Աւետարանական Եկեղեցիի պատմութեան –

1) Իւթիւճեան, Ստեփան.– «Ծագումն եւ Ընթացքը Աւետարանականութեան ի Հայս»: Սկզբնաղբիւր մըն է այս որ գրուած է Շարժումին առաջին յարողներէն մէկուն կողմէ: Գործը սկսուած է 1885–ին, սակայն հրատարակուած՝ 1914–ին, հեղինակին մահէն երեք տարի ետք, Կ. Պոլիս:

- 2) Arpee, Leon. — «The Armenian Awakening» 1909, Շիբսիօ, Ա. Մ. Ն.:
- 3) Arpee, Leon. — «A Century of Armenian Christianity», 1946, Բրինսթըն, Ա. Մ. Ն.:
- 4) Arpee, Leon. — «A Century of Armenian Protestantism», 1946, Բրինսթըն: (Ասիկա արտատպումն է Վեր. Արփիի «The Armenian Awakening» հատորին հինգ դրուխներուն):
- 5) Քասունի, Վեր. Եղիա. — «Լուսաշաւիզ», 1947, Պէյրուսթ:
- 6) Խրլորեան, Վեր. Տիգրան. — «Ոսկեմատեան», երկու հատոր, 1950, Պէյրուսթ:
- 7) Ատանալեան, Վեր. Կարապետ. — «Յուշարձան», 1952, Ֆրեզնօ, Ա. Մ. Ն.:
- 8) Տարազեան, Վեր. Աւետիս. — «Պատմագիրք Մարգարանի Հայ Աւետարանականութեան», 1960, Պրուքլին, Նիւ Եորք:
- 9) G. H. Chopourian. — «The Armenian Reformation Causes and Effects»:

Անտարակոյս, ասոնցմէ դուրս, բազմաթիւ գրքոյկներ ու ատարակներ հրատարակուած են, ստորադրուած՝ Հայ ու աւետարանական հեղինակաւոր գրիչներու կողմէ, ինչպէս՝ Վեր. Ա. Ա. Պետիկեան, Վեր. Տոքթ. Յ. Չազմաքեան, Վեր. Եղիա Քասունի, Վեր. Ա. Շմաւոնեան, Վեր. Տոքթ. Մ. Փափազեան եւ ուրիշներ: Սակայն, մեր կարծիքով, ոչ թէ ինը, հապա նուազագոյնը տասնեակներով հատորներու նիւթ կրնան Հայթայթի Հայ Աւետարանական Եարժումի եւ Եկեղեցիի գոյառումի պատմութիւնը, անոր աշխարհատարած հաստատութիւններն ու գործունէութիւնները, նաեւ դաւանաբանական եւ վարդապետական ըմբռնումները:

Վեր. Դոկա. Կ. Չոփուրեանի գիրքը պատմագիտական ու քննական մեթոտներով աշխատասիրուած գործ մըն է: Դոկտորայի իրեւ թեզ պատրաստուած եւ համալսարանի քննիչ յանձնախումբին կողմէ ընդունուած ըլլալու տուեալները բաւարար հաւաստիք են՝ այս գիրքին հեղինակութիւն եւ կշիռ տալու: Աւելի քան 140 անուն հատորներէ բաղկացած մատենագիտութիւնը եւ 550-է աւելի մէջրերումները վերոյիշեալ աղբիւրներէն, ապացոյց են հեղինակին կատարած սպառնիչ աշխատանքին, որ տարածուած է 170 էջերու վրայ:

Օգտագործուած աղբիւրներու մէջ Հայ Աւետարանական Եարժումի ջատագով միսիոնարական եւ աւետարանական հեղինակներու կողքին տեղ գրուած են նաեւ քննադատ գրիչներ՝ ինչպէս Աւետիս Պէրպէրեան, Բիւզանդ Եղիայեան, Հայր Ներսէս Բախտիկեան և ու-

րիչներ: Ու պէտք է ըսել որ Վեր. Չոփուրեան առարկայական ու արդար դիրք մը ունեցած է այս հեղինակներուն հանդէպ, ցուցաբերելով մտաւորական պարկեշտութիւն: Մինք կրնանք համաձայն չըլլալ Վեր. Չոփուրեանի հասած դրական կամ բացասական եզրակացութիւններուն, սակայն կրնանք ըսել թէ ան չէ անտեսած քննադատներու կատարած սուր դիտողութիւնները, հոգ չէ թէ անոնց մէջ ոմանք՝ զպացական ու բանաստեղծական, պատմական հունէն դուրս հանուած ակնարկութիւններ եղած ըլլան:

Վեր. Չոփուրեան մօտեցած է նիւթին շատ ընդարձակ շրջագիծի մէջ: Բացի ներածականէն՝ ուր հեղինակը հանդամանօրէն կը ներկայացնէ նիւթը, զիրքը բաժնուած է երեք գլխաւոր մասերու. առաւել՝ ունի Յաւելուածի բաժին մը: Առաջին մասը կը ներկայացնէ Ամերիկեան Առաքելութիւնը Հայոց մէջ, երկրորդը՝ Հայ Առաքելական Եկեղեցիի Հակադիցուութիւնը, իսկ երրորդը՝ Բաժամուսի Սատարոյ Ուրիշ Ազգայններ: Այս երեք գլխաւոր մասերը տարածուած են տասը դրուիւններու մէջ, որոնցմէ իւրաքանչիւրը ունի 4-6 ստորաբաժանումներ:

Առաջին մասին մէջ Վեր. Չոփուրեան հակիրճ ակնարկով մը կը ներկայացնէ անդլիական եւ ամերիկեան բարեկարգութիւններու աւանդը, աստուածաբանական վարդապետութիւններն ու անոնց կիրարկութիւնը մարդուն աօրեայ կենցաղին, ինչ որ կ'արդարացնէ ամբողջ աշխարհը աւետարանելու մարդոց ձգտումն ու գործելակերպը:

Գիրքին երկրորդ մասը կը ներկայացնէ Հայաստանի քրիստոնէացումը: Հայ Եկեղեցիի ազգայնացումը եւ դաւանական մեկուսացումը, բարեկարգչական շարժումները եկեղեցիէն ներս, ու վերջապէս՝ 1830-ական թուականներուն սկսող բարեպաշտական շարժումը եւ «Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցի»ի գոյառումը:

Երրորդ մասին մէջ հեղինակը կը վերլուծէ բաժանումի ազդակները, ներկայացնելով քաղաքական, ազգային եւ ընկերաբանական ենթահողերը: Թուրքիոյ յարաբերութիւնները արեւմտեան երկիրներու հետ եւ այս վերջիններուն անուղղակի ճնշումները՝ ամբողջ Օսմանեան Տէրութեան վարչակարգը բարեփոխելու եւ ուղիներ բանալու ընդհանուր ազատագրութեան եւ լուսաւորումի: Համայնքային դրութիւնը քաջալեր կը հանդիսանայ խիղճի ու պաշտամունքի ազատութեան:

Եզրափակիչ գլուխին մէջ, հեղինակը՝ յետադարձ ակնարկով մը Հայ Աւետարանական Շարժումի 127 տարիներու պատմութեան վրայ, կ'ուղէ ապացուցանել թէ անտեղի էին հայ ազգի առաջնորդներուն մտավարկութիւնները, թէ բարեկարգչական այս շարժումը

պիտի պառակտէր ազգը ու օտարամուտ տարրեր պիտի տկարացնէին Հայ ազգայնականութեան ոգին: Սկզբնական շրջանի երեւոյթները առիթ տուին այս մտավախութեան, սակայն Հայու հոգին՝ աւետարականութեամբ շաղուած՝ ունեցաւ իր բարբարոս ազդեցութիւնը Հայ կեանքին վրայ: Նախ՝ Հայ մտքին եւ հոգիին մէջ դեռին դտաւ կրօնական հանդուրժողութիւնը: Երկրորդ, կրօնական, կրթական և ընկերային կեանքը Հայ ժողովուրդին՝ շաղախուեցաւ աւետարանական հոգեւորութեամբ: Երրորդ, աւետարանականներ զարկ տուին կրթական դործին ու շնորհիւ միսիոնարներու օգնութեան մեծ քաղաքներէն սկսեալ մինչեւ յետին գիւղերը հաստատեցին դպրոցներ, ու այս կերպով բարձրացուցին Հայուն կրթական մակարդակը: Չորրորդ, Աստուածաշունչը ժողովրդականացուցին՝ աշխարհաբար Հայերէնի թարգմանելով դայն, որուն իբր արդիւնք՝ զարգացաւ նաեւ արեւմտահայերէնը: Հինգերորդ, աւետարանականութիւնը տարածեց կիրակնօրեայ Դպրոցի դրութիւնը, ինչ որ ժամանակի ընթացքին որդեգրուեցաւ Հայ Առաքելական Եկեղեցիի կողմէ: Վեցերորդ, աւետարանականութիւնը ջատագով հանդիսացաւ Պետութեան եւ կրօնքի բաժանման սկզբունքին: Եօթներորդ, շնորհիւ այս շարժումին, Հայ Եկեղեցիի բարեկարգութիւնը միշտ սեղանի վրայ պահուեցաւ ու բարեկարգչական սահմանափակ միջոցներ գործադրուեցան:

Վեր. Չոփուրեանի գիրքը ունի լաւատես վերջաբան մը: Ան կը հաւատայ որ Հայ Եկեղեցին՝ եթէ ոչ արագ ու արմատական՝ դոնէ աստիճանական յեղաշրջումի մէջ է, իսկ Հայ Աւետարանականութիւնը աւելի քան երեք դիտակից կը դառնայ ազգային միասնականութեան եւ իր հոգեւոր առաքելութեան:

Յաւելուածի բաժինին մէջ տեղաւորած են 1840-ական թուականներուն Կ. Պոլսոյ Հայ Եկեղեցիի իշխանութեանց եւ Աւետարանական Շարժումի ռահվիրաներուն յայտարարութիւնները եւ դաւանական հանդանակները, որոնք այդ շրջանին խոսովեցին Հայ կեանքը իրենց կարծիքով, անդիջող ու ծայրայեղ դատումներով:

Անկախ իր պատմական, աստուածաբանական եւ եկեղեցաբանական արժէքէն, Վեր. Չոփուրեանի այս գիրքը կը մղէ ընթերցողը ինքնաճանաչումի եւ փոխադարձ գնահատանքի, որով կ'արդիւնաւորուի թոյր եկեղեցիներու ինքնուրոյն ծառայութիւնը Հայ ժողովուրդին մէջ: Նպատակի այս նոյնութեամբ, իրարու մօտ կու գան «մրկաւ զատուած» ազգակիցները, մէկտեղ վայելելու Հայ ժողովուրդին դարերու հոգեւոր ժառանգութիւնը, նաեւ յառաջդիմելու քրիստոնէական գիտակից հաւատքի ու կենցաղի մէջ: